

հարաւ – արեւմտեան բլուրին վրայ, այսինքն Սիոն լե-
րան վրայ: Երբ թագաւոր – մարգարէն իր մայրաքա-
ղաքը ըրաւ զայն, ան ընդունեց «քաղաք Դաւթի»
անունը: Ուրիշ տեղեկութիւններու պակասութեան
պատճառաւ, յիշատակարան մը անտարակուսելի կեր-
պով ցոյց տուաւ նոյն տեղը, Դաւթի թագաւորութենէն
մինչև մեր թուականին Ա. կամ Բ. դարը, վասնզի Իս-
րայէլի թագաւորութեան պատմական զիրքերը, Դաւ-
թի, Սողոմոնի եւ շատ մը Յուդայի թագաւորներուն
չիրիմները կը գնեն հին Սիոնի շրջափակին՝ «Դաւթի
քաղաք»ին մէջ: Գերութենէ դարձին, ծերերը որ տե-
սած էին Սողոմոնեան Տաճարին փառքը, նմանապէս
տեսած էին թագաւորական գերեզմանատունը: Նեեմի
անվարան գտաւ զայն «Դաւթի քաղաք»ին մէջ, որ
է հին Սիոն: Յիսուս Քրիստոսէ մէկ դար առաջ, Յով-
հաննէս Հուրկանոս քահանայ – թագաւորը մտաւ ար-
քայական գերեզմանատունը հարստութիւններ փրնտ-
ռելու՝ Անտիոքոսէն ազատելու համար պաշարեալ Ե-
րուսաղէմը: Մեծն Հերովդէս իր կարգին բռնաբարեց
գերեզմանատունը և իր սրբապղծութիւնը զրգուած
Ժողովուրդին հանդէպ դարմանելու համար «փառաւոր
յիշատակարան մը շինեց Դաւթի գերեզմանին զրան
վրայ»: Ս. Պետրոս իր Երուսաղէմի և սփիւռքի հըր-
եայ Ժողովուրդին խօսած ճառին մէջ ճոխաբանու-
թեամբ կը խօսի թագաւոր – մարգարէին շիրմին վրայ
ու կ'ըսէ. «Եւ գերեզման նորա կայ ի միջի մերում
մինչև ցայժմ» (Գործք Բ. 29): Այս գերեզմանին շը-
նորհիւ, Սիոն, Դաւթի քաղաքը, ծանօթ էր քրիս-
տոնեայ առաջին սերունդներուն եւ նախընթաց դա-
րերու Հրէից: Այսպէս նաև Եւսեբիոս Կեսարացի եւ
Յերոնիմոս, ինչպէս և հրեայ պատմագէտը անվարան